ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԷՆ

— Դումայի ընտրութիւնները վերջացան Կովկասի մէջ. նոր օրէնքի համաձայն՝ Հայութիւնը մէկ ներկայացուցիչ պէտք էր ունենալ. պատգամաւոր ընտրուած է դարձեալ Սաղաթիէլեան, Դաշնակցութեան պաշտօնական ներկայացուցիչը՝ պետական երկրորդ Դումայի մէջ։

— Վերոյիշեալէն զատ՝ Նոր Դումայի անդամ ընտրուած հայազգի պատգամաւորներն են. Քիշնեվի կողմանէ Անտոն Կայետանով Դեմենովիչ, աջակողմեան. Ղրիմի կողմանէ Մելգոն Մուրզայեվ (կադէտ), Աջեմեան, 28 տարուան երիտասարդ մը, երդուեալ հաւատարմաբար։

— Ամերիկայի մէջ կազմուած է «Հայ համալսարանական ակումբ մը» որ իրեն յատուկ թերթերով կամ միջոցներով պիտի իրագործէ գովելի գաղափար մը, համալսարանական կրթութիւնը սիրելի ընել և տարածել՝ հայ գաղութին մէջ։

— Ակնայ մէջ մեծղի հրդեհի մը զոհ գացած են հարիւրաւոր խանութներ ու տուներ. 70,000 ոսկիի վնաս մը։

— Գէորգեան Ճեմարան դատարկուած է դասարաններէ, և այսուհետեւ հոն գոյութիւն պիտի ունենան միայն լսարաններ։

— Եղերամահ Յ. Թաւշանճեան կտակած է 5000 տոլար ազգային Հիւանդանոցին, 3000 տոլար Նիւ-Եօրքի եկեղեցւոյն, 1000 տոլար Խասգիւղի Գալֆայեան որբանոցին։ Իսկ տիկին Թաւշանճեան 20( ) տոլար նուիրած է Հայկական եկեղեցւոյ մը շինութեան։ Սարգիս էֆ. Գարակէօզեան 100 ոսկի նուիրած է Գալֆայեան որբանոցին։ Գահիրէի մէջ մասնախումբի մը սարքած երեկոյթէն 50 ոսկիի նուէր մը կազմուած է ի նպաստ Բաղէշի սովեալներուն։ Տ. Յովհ. Յակոբեան 1000 ոսկի նուիրած է Ազգային Հիւանդանոցին։ Մանչէստր բնակող հայ մը՝ կոճակներու նոր տեսակի մը հնարող՝ ոչ նուազ գովելի գործ մ'ըրած է 2000 ոսկի նուիրելով Ազգային Հիւանդանոցին։

— Երուսաղեմայ ձեռագրաց մէջ գտնուած է Լեւոն Գ.ի (1270-1289) իր կեսան Թագուհւոյն և չորս զաւակներու խմբանկարը։ Թէ որքան հետաքրքրական է անոր հրատարակութիւնը՝ թէ պատմական, թէ հնախօսական տեսակէտով՝ աւելորդ է ըսել։

— Թիֆլիսի մէջ սկսաւ հրատարակուիլ հայկական նոր օրագիր մ'ալ, Նոր-Աչիք անունով, Խարիսխ, Կովկասի առաւօտ, և այլն, թերթերու ուղղութեամբ։

— Սաքսոնիոյ արքայորդի հայազգէտ իշխան Մօրից, որ Ս. Ղազարու վանքը պատուած էր երեք օր հոն բնակելով և մասնակցելով հայկական ժամասացութեանց, այցելած է նաեւ Էջմիածնի և հոն սիրալիր ընդունելութեան հանդիպած։

ԿՈՎԿԱՍԻ ԱՌԱՒՕՏ

Տարեկան բաժանորդագինն է Թ.ֆլիսի և Ռուսաստանի համար 8 ռուբ., արտասահմանի-տարեկան 35 ֆր., ամսական 3 ֆր. Պարսկաստանի — տար. 9 ռ., ամս. 1 ռ., առանձին համարն ամեն տեղ 5 կոպ.։

Հասցէն փոխելիս օտարաքաղաքացի բաժանորդներն ուղարկելու են տպած հին հասցէն, նոր հասցէն և 40 կոպ. նամականիշ։ Յայտարարութիւնների վճարն է՝ առաջին երեսում իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ, վերջի երեսում 5 կ.։ Մեծ և տեւողական յայտարարութիւններն առանձին պայմանով։ Կովկասից դուրս յայտարարութիւններ ընդունւում են՝ 1 երեսում 20 կոպ. վերջին՝ 10 կոպ.։

Խմբագրութեան և գրասենեակի հասցէն. Б. Ванкская ул. № 6 Редакція газеты "Ковкаси Араворъ„, Тифлисъ. Իսկ արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction du journal «Kowkassi Aravot».

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆԻ

ՄԿՐՏԻՉ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆԻ

ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

Տարւոյս գրականութեան կարեւորագոյն արտադրութիւններէն մին, որուն վրայ առիթ պիտի ունենանք առանձինն խօսելու. նիւթը՝ հայկական ժամանակակից պատմութեան ամենէն հրատապ խնդիրները կը շօշափէ. Հասունեան խնդիրը, քաղաքական գիտակցութեան զարթնումը՝ Հայոց մէջ, և այլն։

ԱՀԱ ԻՐ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Ներածութիւն. . . . . . . Ե
Գլուխ Ա. Միջավայրը 9
Գլուխ Բ. Պէշիկթաշլեանի մանկութիւնը ու պատանեկութիւնը 42
Գլուխ Գ. Պէշիկթաշլեան գործիչ . . 49
Գլուխ Դ. Պէշիկթաշլեան և թատրոնը Հայոց մէջ 83
Գլուխ Ե. Պէշիկթաշլեան և կրօնական պառակտումները Հայոց մէջ . . . 121
Գլուխ Զ. Պէշիկթաշլեանի ներքին կեանքը. 213
Գլուխ Է. Պէշիկթաշլեանի գրական գործը. 227

digitised by A.R.A.R.@

ԲԱՑՈՒԱԾ Է
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1908 ՏԱՐՒՈՅ ԲԱԶՄԱՎԷՊԻ
ԿԶ ՇՐՋԱՆ

ԳԻՆ՝ 10 ՖՐ.

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

ԱՌԱՆՁԱՐ. — *Փրկիչներ. Թատերախաղ հինգ արարուածով. Աղեքսանդրիա (Եգիպտոս). տպ. «Րաֆֆի».* 1907. *գին. ֆր.* 1.50, *կամ* 60 *կոպ։*

ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ. — *Գեթսեմանի. Կրօնական բանաստեղծութիւններ. Կ. Պոլիս,* 1905. *տպ. Յ. Մատթէոսեան. գին.* 6 *ղրշ։*

Հէ. — *Անջատուածները «Յառաջ»ի գրադ.* N. 47. *Թիֆլիս.* 1907. *տպ. «Հերմէս». գին.* 10 *կոպ։*

ՄԻՔ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ. — *Փիլիսոփայ Սօցիոլօգ. «Յառաջ»ի գրադ.* N. 48. *Թիֆլիս,* 1907. *գին.* 15 *կոպ։*

Գ. ԽԱԺԱԿ. — *Դէպի Ֆէդէրացիա. «Յառաջ»ի գրադ. Թիֆլիս.* 1907. *գինը* 80 *կոպ։*

Ա-ԴՕ. — *«Հայ-Թուրքական ընդհարումը Կովկասում* (1905–1906 *Թ.» փաստական, վիճակագրական, տեղագրական ուսումնասիրութիւններով. գինը* 1 *ր.* 50 *կ. Երեւան, տպ. Այվազեանց և Նազարեանց.* 1907։

N. DOLENS ET A. KHATCH. — «Histoire des anciens Arméniens», Genève, 1907. — *Եւրոպայի հայ ուսանողներու Միութեան հրատարակութիւն. Քննական պատմութիւն Հայոց՝ մինչեւ Տրդատ Գ։*

ԲԺԻՇԿ ՍԻՄԷՈՆ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ. — «1905 *թուի օգոստոսի* 1-*ի ուկազը և ժամանակաւոր կանոնները», Մոսկւա, տպ. Ե. Աւետիքեան,* 1907, *գին* 50 *կ.* — *Հոգեւորականներու և ուսուցիչներու համար՝ ձրի։*

Ս. Ս. ՁԱԿ. *«Հող և կապիտալիզմ», թրգմ. ռուս. Մ. Մ. Թիֆլիզ,* 1907, *գին* 15 *կ։*

Լ. ՇԻՇԿՕ. — *«Նուազագոյն ծրագիրը». Թրգմ. ռուս. Մ. Աստ. Թիֆլիզ,* 1907, *գին՝* 12 *կ։*

ՅՈՎԱԿԻՄ ՍՕԼՕՎԵԱՆ. — *«Խռովարկուներ», պատմուածք մօտ անցեալից, Թիֆլիս, տպ. Աղանեանց, գին՝* 25 *կ։*

FINCK. — *Armenische Litteratur*, München. 1906.

ՏՈՔԹ. ԵՆՈՎՔ ԹԼՅԵԱՆ. — *Տարրական դասընթացք. Նախատարերք բնագիտական և բնապատմական գիտութեանց. Ա. և Բ. տարի. Կ. Պոլիս։ Տպագր. Մատթէոսեան.* 1907. *գին* 6 *ղրուշ։*

ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ. — *Մանկապարտէզ քերական. Կ. Պոլիս. տպ. Մատթէոսեան,* 1907, *գին՝* 20 *փարա։*

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱԼԽԱՍԵԱՆ. — *«Ջորստ-Մորստ», պատկերներ իրական կեանքից, երրորդ գիրք. Նոր-Նախիջեւան,* 1907, *գինը՝* 30 *կոպէկ։*

digitised by A.R.A.R.@

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ Ս. ՂԱԶԱՐՈՒ ՄԱՄՈՒԼԷՆ

ՁԱՅՆՔԱՂ ՇԱՐԱԿԱՆՔ

ՈՐ ՊԱՇՏՍԻՆ Ի ՀԱՍԱՐԱԿԱՑ ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ

Գեղատիպ և մեծադիր հրատարակութիւն շարականներու՝ եկեղեցւոյ ատեանին համար, ձեռագրաց ամենէն ընտիր ընթերցումներով և խաչերով։ Ամենէն գերազանցը՝ իր տեսակի հրատարակութեանց մէջ, թէ գրական և թէ տպագրական տեսակէտով։ Համեմատուած են ձեռագրաց մէջ շարականաց ամէն բառ, և իւրաքանչիւր երաժշտական նշան՝ ճշդիւ ներկայացնելով մեսրոպին վրայ։ Գրքիս արտաքինը յօրինուած կը թուի ներդաշնակուելու համար տաճարներու գեղեցկութեան հետ, որոնց կը վերադարձնէ նախնեաց հարազատ գեղեցկանքները։

ԳԻՆ՝ 25 ՖՐ.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԹ.

ՄԱՍՆ Գ. 1868-1878

ԳՐԵՑ Հ. ՄԻՆԱՍ Վ. ՆՈՒՐԻԽԱՆ

Պատմութեան ճիւղերուն մէջ – ամէնքն ալ օգտակար – ոչ մէկը այնքան տենդ կը հաղորդէ ընթերցողին՝ ինչպէս ժամանակակիցը։ Ահաւասիկ հատոր մը 630 էջով՝ որ կը ներկայացնէ աշխարհը 1868 տարիէն մինչեւ 1878։ Մեծ յեղաշրջութիւններ կ'անցնին առջեւնէս. Գաղղիա – գերման, ռուս–թրքական պատերազմները, իտալիոյ վերածնունդը, և այլն։ Մասնաւորապէս շադրութիւն ընծայուած է դուրս ցայտեցնելու համար Հայոց դէրն և կացութիւնն այդ շրջանին՝ Թուրքիոյ պաշտօնարաններու և ռուսական բանակին մէջ։

ԳԻՆ՝ 5 ՖՐ.

ՀԱՆՐԱԳՐՈՒԹԻՒՆ

(ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԳՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՈՃ ՄԸ)

ԵՐԿԱՍԻՐԵՑ

Հ. ԱԹԱՆԱՍ Վ. ՏԻՐՈՅԵԱՆ

Հայեր քիչ անգամ ձեռնարկած են համազգային նկարագիր մ'ունեցող գործերու։ — Գրքիս հեղինակը հնարած է գրութեան նոր ոճ մը (երկու ժամուան մէջ ուսանելի) որով մարդ թուանշաններով կը բացատրէ իր բոլոր գաղափարները՝ իր լեզուն չգիտցողին։ Գիրքս կը բովանդակէ գերականութիւն, հրահանգներ, բառարան (ընդ. ամէնը 570 էջ)։ Այս երկը հետաքրքրական գործ մը չէ միայն, այլ նաեւ ճոխ հաւաքածոյ մը հայ լեզուի հոմանիշներուն, հետեւաբար օգտակար ամէն Հայու։

ԳԻՆ 5 ՖՐ.

ՍԻԵՆՔԻԵՎԻՉԻ

«ՀՐՈՎ ՍՐՈՎ»

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ, ԶՈՐՍ ՀԱՅՈՐ, ԹԱՐԳՄԱՆԵՑ

Հ. ԱՆԱՆԻԱ Վ. ԳՈՒՆՏԱՖՃԵԱՆ

Quo Vadisի հեղինակը աշխարհածանօթ է. բայց լեհացի լուրջ քննադատներու համեմատ՝ Quo Vadisը շատ ստորին կը մնայ Սիէնքիէվիչի «Հրով Սրով»էն, որ հեղինակին ամենէն ուժեղ գործն է. վէպը առնուած է լեհական կեանքէ, սակայն թաթարական արշաւանքի նկարագիրներ՝ զայն գրեթէ մեր արդի կեանքէն առնուած ցոյց կու տան։ Վէպին բոլոր անձնաւորութիւնները քանդակուած են շատ յստակ գիծերով, և տեսարանները նկարուած թարմ գոյներով։

Հայերէն թարգմանութիւնը կատարուած է կըտրուկ, պարզ, բնական աշխարհաբարով մը։

Գին 5 ֆր.

Այս գրքերն ստանալ փափագողք՝ դիմեն մեզ հետեւեալ հասցէով. IMPRIMERIE ARMÉNIENNE

St. LAZARE **VENISE (Italie)**

digitised by A.R.A.R.@